

ճակն վերստին վատթարեցաւ: Պոկտան իշխանն Ղեհաստանի ազնուական բաղմաթիւ ընտանեաց հետ խնամեցած էր, Ղեհերն իւր երկիրն բերած եւ նոյն իսկ պետական մեծամեծ պաշտօններ ա- նոնց յանձնած: Ընդոժին Պոյարներն սկսան զինք յանդիմանել, որ որթողոքսութենէ ելլել եւ լատին եկեղեցւոյ անցնիլ կ'ուզէ: Պոկտան այս անհաճոյ յանդիմանութենէն աղատելու եւ որ- թողոքս եկեղեցւոյ վրայ իւր ունեցած եռանդը ցուցնելու համար՝ սկսաւ յամին 1570⁹¹ հա- լածել տեղաբնակ Հայերն, վասն զի ասոնք կ'ընդ- դիմանային զիրենք որթողոքսութեան դարձը- նելու փորձերուն⁹², եւ վերջապէս զասոնք եր- կրէն մերժեց⁹³:

Թէեւ այսչափ հալածանք կրեցին Հայք, սակայն կ'երեւայ թէ — հաւանականաբար ի- րենց հարստութեամբը — շատ մեծ ազդեցու- թիւն ունէին երկրին մէջ. վասն զի նոյն Պոկտա- նին յաջորդեց Մոլտաւիոյ գահին վրայ Հայու մը Հայ կնոջն⁹⁴ Սրբուհւոյն եւ Սդեֆանիցա (Թոմշա 1563—1564) իշխանին ապօրինաւոր զաւակն Յովհաննէս Անգութն (1572—1574), որ իւր հայ ծագման պատճառաւ «Յովհաննէս Հայ»⁹⁵ կը կոչուի:

Յամին 1582, Եանգուլ (Յովհ. Բ) Սաք- սոնիացի իշխանին ժամանակ, (1579—1582) որ Պետրոս Ռարէշ իշխանին եւ Վայս Եօրկին Թրասիլվանիացի-Սաքսոնիացի կնոջն ապօրինաւոր որդին էր, Մոլտաւիոյ արեւելեան հայ եպիսկո- պոսն Յովհաննէս Յունանեան⁹⁶, որուն աթոռն